քին հասցէն է [www.axisofjustice.org](http://www.axisofjustice.org), ուր ներ- կայացուած են տարբեր ոչ-շահարեր կազմակեր- պութիւններ, ըլլան անոնք քաղաքական, ընկե- րային, կենսոլորտային, հակա-պատերազմ, մարդկային իրաւանց թէ այլ, իրենց գործու- նէութիւններով:

Լիբանան ծնած եւ ապա փոքր տարիքին իր ընտանիքին հետ Լոս Անճելըս փոխադրուած Թանգեանի գործունէութեան առանցքներէն մէկը Հայկական Յեղասպանութեան ճանաչու- մի արշաւն է: 2000ի Նոյեմբերին, դրածակաբար Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին հետ, «Սիսթեմ Աֆ է Տառն» տուաւ համերգ մը «Հայ- կական Յեղասպանութեան ճանաչումին եւ մարդկութեան դէմ ոճիրներու դադրեցումին» նուիրուած, որուն հասոյթը (20 հազար ամերիկ- եան տոլար) յատկացուեցաւ Հայ Դատի աշխա- տանքներուն:

2002ին, Միացեալ Նահանգներու մեծագոյն եւ կարեւորագոյն համերգաշարը հանդիսացող «Օգֆեսթ» փառատօնին, Սիսթեմ Աֆ է Տառնի դարձեալ կ'ընկերակցէր Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը, որ համերգներուն ներկայ գտնուող հազարաւոր համակիրներուն Հայկա- կան Յեղասպանութիւնը եւ Թուրքիոյ ուրացու- մը ներկայացնող գրքոյկներ եւ թղթիկներ կը բաժնէ:

12 Յուլիսի իր թիւին մէջ «Նիւ Եորք Թայմզ» կը գրէր. «Խումբը, որ կը բաղկանայ ամերիկա- հայերէ, «էքսիս Աֆ ձաւթը» վրան մը հաստա- տելով Ա. Համաշխարհային պատերազմին ըն- թացքին գոհ գացած հայերու մասին զրուցիւն- ներ կը բաժնէր»:

Բնականաբար նման պարբերական գործու- նէութիւններով չի սահմանափակուիր «Սիսթեմ Աֆ է Տառն»ի ներդրումը Հայ Դատին: Հար- ցազրոյցներու ընթացքին Սերժ Թանգեան եւ իր խմբակիցները՝ Տարօն Մալաքեան, Շաւո Օտաճ- եան եւ Ճոն ՏոյմաՅեան տեւաբար կը յիշեն Հայ- կական Յեղասպանութիւնը եւ թրքական պե- տութեան ուրացումի շարունակուող քաղաքա- կանութիւնը: «Սիսթեմ Աֆ է Տառն»ի պաշտօ- նական կայքին ([www.systemofadown.com](http://www.systemofadown.com)), թէ «էքսիս Աֆ ձաւթը» կամ «Տարօն Մալաքեա- նի» ([www.daronmalakianrocks.com](http://www.daronmalakianrocks.com)) կայքերուն մէջ տեւաբար կը հանդիպինք Հայ Դատի Յանձ- նախումբի յայտարարութիւններուն եւ կոչե- րուն, ինչպէս նաեւ Հայկական Յեղասպանու- թեան առնչուող նիւթներու եւ լինքերու:

Այս բոլորէն ետք, երբ հարց կու տանք Թանգ- եանի, թէ Յեղասպանութեան ճանաչումի վերա- բերեալ աժանտա (օրակարգ) մը ունի՞, կատա- կելով կը պատասխանէ.

«Ես աժանտա չեմ գործածեր, ժամադրու- թիւններու տետրակ ունիմ», աւելցնելով. «պար- գապէս կ'արտայայտեմ այն՝ ինչ որ սրտէս կը ըսի»:

«Սիսթեմ Աֆ է Տառն» իր առաջին համանուն ալպոմով, երկրորդ՝ «Թոքսիսթի» ալպոմով, ինչպէս նաեւ տարի մը առաջ Հրատարակուած «Սթիլ Տիս Ալպոմ»ով արդէն դարձած է համաշ- խարհային հռչակ վայելող խումբ: 2001ին գու- զադիպաբար 11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքներու շարաթիւ, «Թոքսիսթի» կը գտնուէր Միացեալ Նահանգներու մէջ ամէնէն շատ վաճառուող ալպոմներու պարագլուխի դիրքին վրայ: Խումբը նաեւ քանիցս «Կրէմի» մրցանակներու թեկնածու հանդիսացած է: Մեր հարցումին, թէ «Կրէմի»ի նման մրցանակներու թեկնածու ըլլալը ի՞նչ նշանակութիւն ունի խումբին համար Թանգեան կը պատասխանէ.


«Պիտի չկարենամ ինձմէ գատ ոեւէ անձի անունով խօսիլ, որովհետեւ չեմ կրնար ինձմէ անդին ոեւէ մէկը լաւապէս ներկայացնել: Այս ըսելով, ընդգծեմ, որ թէեւ նման պատիւ կ'ար- ժեւորեմ, սակայն այսպիսի բաներու մասին եր- կար մտածող չեմ եղած երբեք»:



Սիրոն կը ներկայացնեն բառերը «Սիսթեմ Աֆ է Տառն»ի ստաջին ալպոմին մէջ քննարկուած «P.L.U.C.K.» կրօն, որ նուիրուած է Հայկական Յեղասպանութեան:

P.L.U.C.K.

- Elimination
Why, Die Walk Down
A whole race Genocide, Taken away all of our pride, A whole race Genocide, Taken away, Watch Them all fall down.
Revolution, the only solution, The armed response of an entire nation, Revolution, the only solution, We've taken all your shit, now it's time for restitution.
Recognition, Restoration, Reparation, Recognition, Restoration, Reparation, Watch them all fall down.
Revolution, the only solution, The armed response of an entire nation, Revolution, the only solution, We've taken all your shit, now it's time for restitution.
The plan was mastered and called Genocide (Never want to see you around) Took all the children and then we died, (Never want to see you around) The few that remained were never found, (Never want to see you around) All in a system of Down.....Down.....Down.....Down.....Walk Down.....
Watch them all fall down, Revolution, the only solution, The armed response of an entire nation, Revolution, the only solution, We've taken all your shit, now it's time for restitution.
The plan was mastered and called Genocide (Never want to see you around) Took all the children and then we died, (Never want to see you around) The few that remained were never found, (Never want to see you around) All in a system, Down







# Կնոջական

## ՓՈՐՁ ԸՆԴՍԱՐԱՆ

### ԻՆՉՊԵՍ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻԷՔ ՀԱՐՅԵՐԸ

Շատեր հակում ունին նուազագույն հարցը մեծցրնելու, չափազանցելու, ողբերգություններ վերածելու: Ուրիշներ, ընդհակառակը, կը փորձեն նսեմացնել, թեթևի առնել զայն: Արդեօք դուք, ո՞ր խումբին կը պատկանիք: Իմանալու համար պատասխանեցէք այս փորձահարցանին եւ կարդացէք արդիւնքը:

1 չէք տար: Բ.- Խիստ նայուածք մը կ'ուղղէք: Գ.- Կը ժպտիք:

2 Կը սակարկէք եւ զեղչ կը պահանջէք: Ա.- Ինքնաշարժ մը գնելու ժամանակ: Բ.- Գրեթէ միշտ, որեւէ գնումի պարագային: Գ.- Երբեք չէք սակարկեր, չէք սիրեր այդ կացութեան մէջ գտնուիլ:

3 Երբ կը խնդաք... Ա.- Կը խնդաք բարձրաձայն: Բ.- Վերապահութեամբ, առանց ուշադրութիւն գրաւելու: Գ.- Ձեռքով ձեր բերանը կը ծածկէք:

4 Գործի պահուն պաշտօնակից մը անյարմար ճոք մը կը պատմէ բոլորին: Ա.- Բոլորին նման դուք ալ կը խնդաք: Բ.- Կը ձեռքով ձեր բերանը կը ծածկէք: Գ.- Կ'առաջարկէք, որ ճոքին բնոյթը փոխէ:

5 Զեր մեծաւորը գործի հետ կապուած դիտողութիւն մը կ'ընէ ձեզի: Ա.- Կը մտածէք, որ իրաւացի էր րսածը: Բ.- Ձեր սրտին կը դնէք եւ ամբողջ օրը անտրամադիր կ'ըլլաք: Գ.- Ձեր գայրոյթը առանց բացայայտելու ժպիտով կը հեռանաք:

6 Անտանելի խնոզումի մէջ ինկած էք, անկէ դուրս գալու համար կը փափաքիք: Ա.- Հրատալ մը ունենալ եւ խնոզումը ճեղքելով յառաջանալ: Բ.- Հոռմէական կառք մը ունենալ եւ բոլորէն մեկուսանալ: Գ.- Ֆորմիլալի ինքնաշարժով մը սուրալ եւ ազատիլ խնոզումէն:

7 Տխուր ժպակէն մը դիտելու պարագային: Ա.- Առանց աւելորդ տազնապելու կը հետեւիք: Բ.- Անմիջապէս կուլաք: Գ.- Ժպակէնը կ'իստ կը ձգէք:

8 Նաւաթոյթներու ընթացքին ընդհանրապէս: Ա.- Լուռ կամ սակաւախօս էք: Բ.- Խօսուել եւ կատակասէք: Գ.- Չափաւոր խօսող մըն էք:

9 Յաճախ ձեզ կը քննադատեն, որովհետեւ: Ա.- Ձեր խօսակցը ուշադիր լսող մը չէք: Բ.- Գաղտնապահ չէք: Գ.- Ձեր զգացումները արտայայտող չէք:

10 Տխուր ժպակէն մը դիտելու պարագային: Ա.- Առանց աւելորդ տազնապելու կը հետեւիք: Բ.- Անմիջապէս կուլաք: Գ.- Ժպակէնը կ'իստ կը ձգէք:

11 Տխուր ժպակէն մը դիտելու պարագային: Ա.- Առանց աւելորդ տազնապելու կը հետեւիք: Բ.- Անմիջապէս կուլաք: Գ.- Ժպակէնը կ'իստ կը ձգէք:

տուհանէն դուրս կը դիտէք: Բ.- Կը մտածէք՝ կենցաղավար չեմ: Գ.- Խիստ նայուածք մը կը նետէք անոնց վրայ:

15 Անցորդ մը ձեզմէ քիչ մը անդին կ'իյնայ... Ա.- Կը վազէք օգնելու: Բ.- Քարացած՝ կը դիտէք: Գ.- Հազիւ կը զսպէք ձեր խնդրքը:

## ԱՐԳԻՒՆՔ

● Եթէ 32 եւ աւելի կետ հաւաքեցիք, լաւատես

ա	բ	գ
1	2	3
2	3	2
3	3	2
4	1	2
5	3	2
6	2	1
7	2	3
8	3	1
9	2	2
10	3	2
11	3	3
12	2	1
13	2	3
14	0	0
15	1	2

անձ մըն էք, ժպիտով մը, կատակով մը կը յաջողիք տիրող ծանր մթնոլորտը քթեւցնել եւ ներկայապահ դժուարութիւնը դիմազարեւել ողջմտութեամբ, առանց տագնապելու, առանց ողբերգութեան վերածելու: Ձեզի ցուցնող անձերու նկատմամբ ոխ չէք պահեր, ներողամիտ եւ ազնիւ էք:

Թելադրելի է, որ կեանքի ընթացքին պատահող բոլոր հարցերը նոյն քթեւութեամբ չառնէք, ոմանք յաւելեալ կարեւորութեան եւ լրջութեան կը կարօտիք:


● Եթէ 19 - 32 կետ հաւաքեցիք, խնոզումը ձեր անբաժան ընկերն է, ձեր տրամադրութիւնը միշտ բարձր են, եթէ նոյնիսկ ատիկա ի վնաս ուրիշներու պիտի ըլլայ: Ձեր կարծիքով, կեանքը շատ կարեւոր հարցերը մեծցնելու եւ զանցը լուրջի առնելու համար: Հետեւաբար կ'որոշեցէք ջայլամի քաղաքականութիւնը եւ կը ջանք նուիրէք գագոյն չափով ազդուիլ կեանքի դժուարութիւններէն:

● Եթէ 19 եւ պակաս կետ հաւաքեցիք, շատ արագ հակազդող եւ խանդավառող մըն էք: Կատարելապէս, զգայուն եւ խորունկ, միշտ ակազգ կը կախէք ձեր շրջապատին հարցերուն եւ կը փորձէք օգտակար ըլլալ անոնց: Բիշ անգամ կը կատակէք, այն մտաւախութեամբ, որ մէկն ու մէկը վիրաւորէք, ցուցըձեք: Սակայն նախանձախնդիր եք, որ քիչ որ ձեր արժանապատիւնը վիրաւորէ, եթէ նոյնիսկ ատիկա պատահի կատակի ցամբով:

## ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԱՆՈՐ ԱՌԱՋԻՆ ԿՕՇԻԿԸ...

Մանկաբույժ Ալեքսիս Մարիոն կը պատասխանէ շատ մը մայրեր հետաքրքրող հարցերու: Ինչ կը վերաբերի երեխաներուն առաջին կօշիկին:



1.- Քանի՞ տարեկանին երեխայ մը պէտք է կօշիկ հագնի: Ըստ տղթ.- Մարիոնի, քաղաքի չսկսած երեխան կօշիկ պէտք չունի: Նոյնիսկ թելադրելի է, որ ան բոլորի մնայ, որպէսզի ոտքին մկանները ամբողջութեամբ կազմուին եւ կօշիկի մէջ չսեղմուին: Անշուշտ երեխան կրնայ կակուղ «բաղիկներ» կամ գուլպայ հագնիլ տան մէջ կամ դուրսը, բայց իսկական կօշիկի մասին կ'արժէ մտածել, երբ ան ոտքի ելլէ:

2.- Ի՞նչ ձեւի կօշիկ գնել: Պայման է, որ երեխային ոտքին չափը առնուի եւ չափի վրայ կօշիկ գնուի: Նաեւ պայման է, որ երեխան փորձէ գանտը: Թելադրելի է, որ երեխային առաջին կօշիկը ըլլայ շատ որակաւոր եւ կաշիէ պատրաստուած: Կողմերը ըլլան բարձր պոթիքի ձեւով, եւ ան հանգիստ զգայ անոնց մէջ:

Շատ կարեւոր է նաեւ, որ կօշիկին ներքանը ներսի կողմէն պէտք եղած ելեւէջներ ունենայ, բոլորովին տափակ չըլլայ եւ 1 սանթիմետր բարձրութեամբ կրունկով մը օժտուած ըլլայ: Հրատալ քառաչուք մոյկերէն կամ ներսէն մուշտակով օժտուած կօշիկներէն, որոնք երեխային ոտքը յաւելեալ կը քրտնեցնեն:


3.- Երբ փոխել եւ նոր գնել: Առհասարակ գոյգ մը կօշիկը 3 - 6 ամիս կրնայ կրել երեխան: Պէտք է գայն փոխել, եթէ ոտքի գիրքով երեխային բութամատը կօշիկին քիթին կը դպչի, եւ կամ՝

եթէ երեխային եղունգները դէպի վար կը դառնան: Գնելու ժամանակ կարելի է 1 թիւ, ոչ աւելի մեծ գնել, յատկապէս ձմեռը, տրուած ըլլալով, որ երեխան հաստ գուլպաներ պիտի հագնի: Վերջապէս, յանձնարարելի է, որ ձեր գնելիք կօշիկը որակաւոր ըլլալով հանդերձ, շատ սուղ չըլլայ, որպէսզի առանց անհարկ փոխելու գանտը, քանի որ կարելի չէ գործածուած կօշիկները յաջորդ երեխային պահել: Իւրաքանչիւր երեխայ ունի իր կաղապարը, ի՞ր քաղաքը եւ գայն մաշեցնելու ի՞ր ձեւը...

## ԽՈՒՍԱԳԻՐ

### ՊԱՊԱ Օ ՌՈՄ

Բաղադրութիւն՝ 8 անձի համար. խմորին համար՝ 250 կրամ ալիւր 3 հաւկիթ 85 կրամ կարագ 10 կրամ թթիւ խմոր 10 կրամ շաքար Պտղունց մը աղ



Զարդարանքին համար 500 կրամ անանաս 2 մանտարին 250 կրամ շաքար 20 սանթիլիթր ռոմ խմիչք

Պատրաստութիւն. Թթիւ խմորը լուծել 10 սանթիլիթր գաղջ ջուրի մէջ եւ 10 վայրկեան ձգել, որպէսզի թթուի:

Ելեկտրական գործիքով զարնել ալիւրը, աղը, 10 կրամ շաքարը, ապա աւելցնել հաւկիթները եւ առնելուց 6 վայրկեան զարնել: Աւելցնել 75 կրամ կակուղացած կարագը եւ 4 վայրկեան եւս զարնել: Խմորը պարպի կաղապարի մէջ եւ ձգել, որ հանգչի շուրջ 35 վայրկեան, ապա փուռը տաքցնել 180 փրժամատիմանով եւ եփել մօտաւորապէս 35 վայրկեան:

Անանասը կտրտել, կէտր պահել, մնացեալը հարիչ (միքսըր) անցընել, ստացուած հիւթը քամոցէ անցընել եւ կրակի վրայ 150 կրամ շաքար լուծել հետը, աւելցնել նաեւ ռոմը: Կրակին վրայէն հանել, նաեւ կաղապարէն հանել կարկանդակը եւ ներկայանալի ամանի մը մէջ փոխադրել: Ցպիկով մը ծակծակել զայն եւ ռոմով թացանը վրան թափել ու ձգել, որ պաղի:

Մինչ այդ մնացեալ շաքարին մէջ զօրաւոր կրակի վրայ դարձնել մէկ կողմ դրուած անանասի կտորներն ու մանտարիները եւ զարդարել պապա ռոմի կեզրերը:

## ՄՈՒՍԿԱՆԵՐ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

### ՃԻՇԴ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՍԽՏՈՐԻՆ ՄԱՍԻՆ

Սխտորը կը պաշտպանէ քաղցկեղէնը: ՃԻՇԴ. չինական ուսումնասիրութեան մը համաձայն, այն անձերը, որոնք օրական 20 կրամ սխտոր կը սպառեն, 13 անգամ նուազ են թակակայ են ստամոքսի քաղցկեղ ունենալու:

Ճափոնական եւ ամերիկեան ուսումնասիրութիւններ իրենց կարգին կը հաստատեն, որ սխտորը կը պաշտպանէ ստամոքսի, յամրաղիի եւ շագանակագեղձի (փրոսթատ) քաղցկեղներէն:

2 Սխտորը կը պաշտպանէ մեր սրտանօթային դրութիւնը: ՃԻՇԴ. անիկա ոչ միայն կը նպաստէ արիւնը նօսր պահելուն այլեւ կը պակսեցնէ արեան մէջ զէջ քրոնթերոլին եւ թրոմբոլիտին համեմատութիւնը: Սխտորը նաեւ կ'իջեցնէ արեան զերճնումը, պայմանով որ անոր սպառումը ըլլայ հետեւողական:

3 Սխտորը կը կանխարգիլէ ծերութիւնը: ՃԻՇԴ. շնորհիւ իր պարունակած անթիօքսիտաններուն, որոնք կը զօրացնեն մարմինի դիմադրականութիւնը, սխտորի սպառումը, յատկապէս Պէ. 6 կենսանիւթի կողքին, կ'օգնէ, որ մեր մորթն ու մարմինը կարեւոր տոկոսով պաշտպանուին կանխահաս ծերութենէ:

4 Լման ուսելու պարագային, աւելի դիւրին կը մարտնչի: ՍԽԱԼ. անոնք, որոնք մարտնչութեան դժուարութիւն ունին, թելադրելի է, որ ճգմուած եւ կամ եփած ուտեն զայն, քանի որ այսպէսով բնաթեթեւ աւելի կակուղացած եւ դիւրամարս կը դառնան:



5 Սխտորը հակահիւստիւ յատկութիւն ունի: ՃԻՇԴ. անոր ներկայութիւնը մեր մարմինն մէջ կը պաշտպանէ բորբոքային բնոյթ ունեցող շատ մը հիւանդութիւններէ: Նաեւ կարգ մը խայթուած քնքերու պարագային կը թելադրուի կիսուած պեղ մը սխտորով շփել խայթուածը դարմանելու համար:

6 Սխտորը սառնարանը կարելի է պահել: ՍԽԱԼ. սխտորը չոր եւ օդատուն տեղ պէտք է պահել, որպէսզի չծլի: Կարելի է պեղները կեղուել եւ ձեթով լեցնել շիշի մը մէջ լեցնել ու այդ ձեւով սառնարանը պահել երկար ժամանակ:

## ՄԵԾ ՄԱՅՐԻԿԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ


1 Արեան գերճնշում ունեցողները գիշերունէ թող պատրաստեն հետեւեալ խառնուրդը եւ յաջորդ առտու նախաճաշին թող հացին վրայ քսեն եւ ուտեն... 2 պեղ ճգմուած սխտոր, ապուրի դգալ մը մանրուած ազատքեղ եւ քանի մը կաթիլ ձիթախիւղ: Դիւրին եւ անվնաս հնար մը, զոր կ'արժէ փորձել:

2 Ծուլացած երիկամներու պարագային, մէկ լիթր ճերմակ գինիի մէջ 30 կրամ պրասի արմատը 10 օր պահել, ապա քամոցէ անցընել եւ օրական, նախընտրաբար առաւօտեան, կէս բաժակ խմել անկէ:

3 Ակուայի ցաւի պարագային, մեխակի գամ մը դնել ցաւող ակուային վրայ՝ մինչեւ ստամոքսը թուփն հետ ժամադրուիլն ու դարմանատուն հասնիլը:

4 Յօդացաւի պարագային, ցաւող յօդերուն վրայ զետեղել խառնուած կաղամբի տերեւներ: Անշուշտ՝ ժամանակաւոր հանգստութիւն ապահովելու եւ ոչ դարմանելու մտադրութեամբ:

5 Հոռմէացի կայսր Ներոնի ձեթով պատրաստուած պրաս կ'ուտէր իր ճաշերէն առաջ՝ ձայնը յստակացնելու համար:





## Պատրաստե՛ք ՇՈՒԾԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
 «ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



ՊԱՍՔԵԹՊՈԼ

### Հ.Մ.Ը.Մ. - ՍԱՏԱՔԱ՝ 20-0

Լիբանանի պատերազմի տղոց Բ. դասակարգի ախոյեանություն 2րդ հանգրուանի մրցումներուն, երէկ, Հ.Մ.Ը.Մ.ի տղոց ներկայացուցական խումբը 20-0 արդիւնքով յաղթական հոշակեցաւ, նկատի ունենալով, որ անոր մրցակիցը՝ Սատաքա դաշտ չներկայացաւ:

### Հ.Ս.Գ.Մ.Ի ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՎՈՒ ՇՈՒԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԷՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՎ



Պելճիքայի Ասվերս քաղաքին մէջ տեղի ունեցած Եւրոպայի Վու Շուի երիտասարդական մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Ս.Գ.Մ.ի մարզիկներէն Յակոբ Տրստըքճեան եւ Գոհար Գայապալեան, որոնց ընկերակցեցաւ ակադեմիայի մարզիչ մասթրը Չէն Շաօ Ենկ: Երկու մարզիկները ախոյեաններն են Լիբանանի Վու Շուի: Անոնք Լիբանանի վերադարձան պատուաբեր արդիւնքներ ձեռք ձգած:

2 ախոյեանները մասնակցեցան 2 թրետիշը-նըլ տենսներու Չուն ձի եւ Չան Չունան: Չան Չունան տենսին Գոհար Գայապալեան գրաւեց երրորդ դիրքը, 7.81 կէտ ապահովելով, իսկ Յակոբ Տրստըքճեան գրաւեց չորրորդ դիրքը, 8.65 կէտով:

Չուն ձի տենսին, Յակոբ Տրստըքճեան գրաւեց 5րդ դիրքը, 8.50 կէտով:

Նշենք, որ Լիբանան առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէր այս մրցաշարքին եւ Հ.Ս.Գ.Մ.ի մարզիկներն էին Լիբանանի ներկայացուցիչները, որոնք արձանագրած պատուաբեր արդիւնքները իրագործուեցան մասթրը Չէն Շաօ Ենկի ջանքերուն շնորհիւ:

Երկու մարզիկները իրենց ապահոված արդիւնքներուն շնորհիւ, առիթը ունին մասնակցելու աշխարհի ախոյեանութեան մրցումներուն:

### ՇԵՒՉԵՆՔՕ Կ ՈՒՉԷ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԻ ԱՍՊԱՐԷՉԸ ԱԻԱՐՏԵԼ «ՍԱՆ ՍԻՐՕ»Ի ՄԷՉ

Ա. Սէ. Միլանի ուրբանացի յառաջապահ Աստրէյ Շեւչենքօ իտալական «Կապրա Տելլո Սիոր» օրաթերթին հետ հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ կը մտադրէ ֆուտբոլիստի իր ասպարէզը աւարտել «Սան Սիրօ»ի մէջ:

27 տարեկան ուրբանացի միջազգային յառաջապահ Շեւչենքօ, որ 1999ին Տիւսանօ Բիելին միացաւ իտալական կապմին, մինչեւ Յունիս 2006 պայմանագրութիւն մը ստորագրած է Ա. Սէ. Միլանի հետ:

**ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԲԱՐՄԵՐ ՏԻՎԱՆԱՑ ՄԻՈՒԹԻՄ. ՉԱԼԵԱ**  
 Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003, ժամը 10:30ին՝  
**ՍԻՐՏ ՅԻՄՈՒՄԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ Պատարագէն ետք՝ ԲԱՆԱՍՕՍՈՒԹԻՄՆ՝**  
 Նիւթ՝ «ԿՈՒՐՇԵԻ ԲԱՂՅԵՂԸ, ՎԻՐԱՐՈՒԺԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԴԱՐՄԱՆՈՒՄՆԵՐ»  
 Բանախօս՝ ՏՈՒԹ. ՄԻՆԱՍ ԳԱՐԱՄԻԱՍԵԱՆ  
 ԵՐԱԵՐ

**Հայ Աւեր. Կերթմենեան Վարժարան**  
**ԿԱՂԱՆԴԻ ՊԱԶԱՐ**  
 Տեղի կ'ունենայ 5 եւ 6 Դեկտեմբեր 2003ին, Կեսօրե առաջ ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00, Վարժարանիս սրահին մէջ:  
 Գրաւեր



### ՎԱՂԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ 2006Ի ՄՈՆՏԻՎԱԼԻ ԶՏՈՒՄԻ



### ՄՐՅԱՇԱՐՔԻՆ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Վաղը՝ Ուրբաթ տեղի պիտի ունենայ 2006ի Մոնտիվալի կտոււմի մրցաշարքին վիճակագրութիւնը: Նշենք, թէ մրցաշարքը տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ:

ՖիՖԱն երէկ հրապարակեց Եւրոպայի ֆուտբոլի ազգային խումբերուն գրաւած դիրքերը, որոնք բաժնուած պիտի ըլլան եօթ դասակարգի: ՖիՖԱն անոնց դասաւորումը կատարեց, հիմնուելով 2002ի Մոնտիվալին եւ Եւրօ-2004ի ֆուտբոլի կտոււմի մրցաշարքին անոնց արձանագրած արդիւնքներուն:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը մաս պիտի կազմէ վեցերորդ դասակարգին:

Անգլիա, Ֆրանսա, Իտալիա եւ Սպանիա, որոնք պիտի դասուին առաջին իրենց խմբակներուն մէջ, պիտի ունենան հինգ այլ խումբեր, նկատի ունենալով որ անոնք միջազգային աւելի մրցումներ կատարեցին:

Վիճակագրութեան ընթացքին, եւրոպական 51 խումբերը բաժնուած պիտի ըլլան ութ խմբակի: Երէք խմբակներու մաս պիտի կազմեն եօթ խումբեր, իսկ հինգ խմբակներու՝ վեց խումբեր:

Նշենք, թէ կտոււմի մրցումներէն ետք իւրաքանչիւր խմբակի առաջին եւ երկրորդ դիրքերը գրաւող խումբերը պիտի ապահովեն Գերմանիոյ իրենց տունները, մինչ վեց լաւագոյն խումբերը պիտի մասնակցին փլէյօֆի մրցումներուն:

2006ի Մոնտիվալի Ա. հանգրուանի մրցումները տեղի պիտի ունենան Յունիս 9էն 23 (2006), Բ. հանգրուանի մրցումները՝ Յունիս 24էն 27, քառորդ աւարտականի մրցումները՝ Յունիս 30էն Յունիս 1, կիսաաւարտական հանգրուանի մրցումները՝ Յունիս 4ին եւ 5ին, երրորդ դիրքի մրցումը՝ Յունիս 8ին, իսկ աւարտականի մրցումը՝ Յունիս 9ին:

Ստորեւ՝ ՖիՖԱնի կողմէ Եւրոպայի ֆուտբոլի ազգային խումբերուն գրաւած դիրքերը՝ նախքան կտոււմի մրցաշարքին մրցումները տեղի ունենալը:

- Ա. ԳԻՐԲ. - Ֆրանսա, Փորթուգալ, Շուէտ, Չեխիա, Սպանիա, Իտալիա, Անգլիա եւ Թուրքիա:
- Բ. ԳԻՐԲ. - Հոլանտա, Խորուաթիա, Պելճիքա, Դանիա, Ռուսիա, Այրի, Սլովենիա եւ Լեհաստան:
- Գ. ԳԻՐԲ. - Պոլկարիա, Ռումանիա, Սերպիա, Չուեցերիա, Յունաստան, Սլովաքիա եւ Աւստրիա:
- Դ. ԳԻՐԲ. - Ուքրանիա, Իսլանտա, Ֆինլանտա, Նորվեգիա, Իսրայէլ, Պոնիսիա, Լաթվիա եւ Կայէ:
- Ե. ԳԻՐԲ. - Հունգարիա, Վրաստան, Պերտուգալիա, Կիպրոս, Էսթոնիա, Հիւսիսային Իրլանտա, Լիթվանիա եւ Մակեդոնիա:
- Զ. ԳԻՐԲ. - Սլովակիա, ՀԱՅԱՍՏԱՆ, Մոլտաւիա, Ալբանիա, Զարօ Կոչիներ, Մալթա, Սան Մարինօ եւ Լիխտենշտայն:
- Է. ԳԻՐԲ. - Աւստրիա, Լուքսամպուրկ եւ Ղազախստան:
- ՖԻՖԱՆ երէկ հրապարակեց նաեւ 2006ի Մոնտիվալի աւարտականի Ա. հանգրուանի եւ յաջորդ հանգրուանի մրցումներուն թուականները եւ դաշտերուն վայրերը: Նշենք, թէ խումբերը բաժնուած պիտի ըլլան ութ խմբակի:

- Ստորեւ՝ 2006ի Մոնտիվալին յայտագիրը:
- Ա. ՀԱՆԳՐՈՒՄՆ Կ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 9էն 20) Միւնիխ, Կէլսէնքիթըշնի, Տորթմունտի եւ Համպուրկի մէջ:
  - Բ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 10էն 20) Տորթմունտ, Ֆրանքֆորթ, Պերլին, Նիւրեմպերկ, Քայզերսլայտերըն եւ Քէօլն:
  - Գ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 10էն 21) Համպուրկ, Լայփցիկ, Կէլսէնքիթըշն, Շթութկարթ, Ֆրանքֆորթ եւ Միւնիխ:
  - Դ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 11էն 21) Քէօլն, Նիւրեմպերկ, Հանովըր, Ֆրանքֆորթ, Կէլսէնքիթըշն եւ Լայփցիկ:
  - Ե. ԱՄԲԱԿ. - (Յունիս 12էն 22) Կէլսէնքիթըշն, Հանովըր, Քայզերսլայտերըն, Քէօլն, Համպուրկ եւ Նիւրեմպերկ:
  - Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 12էն 22) Պերլին, Քայզերսլայտերըն, Միւնիխ, Նիւրեմպերկ, Տորթմունտ եւ Շթութկարթ:
  - Է. ԱՄԲԱԿ. - (Յունիս 13էն 23) Ֆրանքֆորթ, Շթութկարթ, Լայփցիկ, Տորթմունտ, Հանովըր եւ Քէօլն:
  - Ը. ԱՄԲԱԿ. - (Յունիս 14էն 23) Լայփցիկ, Միւնիխ, Համպուրկ, Շթութկարթ եւ Քայզերսլայտերըն:
  - Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆ Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 24՝ Լայփցիկ եւ Միւնիխ, Յունիս 25՝ Նիւրեմպերկ եւ Շթութկարթ, Յունիս 26՝ Քայզերսլայտերըն եւ Քէօլն, Յունիս 27՝ Տորթմունտ եւ Քէօլն:
  - ԲԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆ Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 30՝ Պերլին եւ Համպուրկ, Յունիս 1՝ Ֆրանքֆորթ եւ Կէլսէնքիթըշն:
  - ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆ Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 4 եւ 5՝ Միւնիխ)
  - ՅՐԴ ԳԻՐԲԻ ՄՐՅՈՒՄ Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 8՝ Շթութկարթ)
  - ԱՒԱՐՏԱԿԱՆ Զ. ԱՄԲԱԿ. - (Յունիս 9՝ Պերլին)

### ՊԵՇԻՔԹԱՇ - ՉԵԼՍԻ ՄՐՅՈՒՄԸ՝ ՇԱԼՔԷԻ ՄԷՉ

ԵՆ. Է. ԷՖ. Ա. ի պատասխանատուները յայտնեցին, որ յառաջիկայ Դեկտեմբեր 9ին տեղի ունենալիք Պեշիքթաշ - Չելսիի մրցումը տեղի պիտի ունենայ չէզոք դաշտի վրայ եւ ոչ թէ թուրքերոյ մէջ:

ՀՈՎԱՆԱԿՈՒԹԵԱՐ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ  
 (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)  
 ՆՆՆԱԳՆՈՒԹԵԱՐ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ  
 ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԵՐԸ - ՎԱՃԱՌՔ  
**ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ**  
 Լուսնաստեղ՝ ԼԵՒՈՆ ԹԱՇՏԵԱՆ  
 Հասոյթը պիտի փրամադրուի «Ազգային»  
 Բացման հանդիսութիւնը փեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԲԱԼԵԱՆ-Հ.Մ.Ը.» մարզաշահութային համալիրի «Անթրոփոլիստան» սրահին մէջ:  
 ՀՐԱՒԵՐ  
 Ծանօթ - Ցուցահանդէսը պիտի շարունակուի Եւրոպա 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ կար ժամը 4:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00

### ԱՐԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ՝ 2003Ի ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԸ

Բանանց Երեւանի մարզիկ՝ Արա Յակոբեան, երէկ ընտրուեցաւ Հայաստանի 2003 տարուան լաւագոյն ֆուտբոլիստը, 65 լրագրողներու, մարզիչներու եւ իրաւաբաններու կողմէ ապահովելով առաւելագոյն կէտերը: Նշենք, թէ 65էն 47ը իրենց քուէին հինգ հոգի՛նց անուանացանկին առաջին անունը նշած էին Յակոբեանի անունը:

Երկրորդ հանդիսացաւ 17 տարեկան Էտկար Մանուչարեան (Փիւնիկ Երեւան), իսկ երրորդ՝ Ապուլա Պետէ (Փիւնիկ Երեւան):

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ՍԻՔՍՈՐԶ ԿՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ 10ՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԷՆ. ՊԻ. Էյ.ի երէկուան մրցումներուն, Ատլանտեան Գօտիի (Արեւելեան Շրջան) պարազուլի դիրքը գրաւող Ֆիլատելֆիա Սիքսըրկի իր դաշտին վրայ պարտուեցաւ Թորոնթօ Ռեփթըրրօյէն՝ 95-88 արդիւնքով. անիկա այսպիսով կրէց եղանակի իր 10րդ պարտութիւնը:

Հակառակ Էլըն Ալվըրսընի (Սիքսըրկ) կողմէ նշանակուած 35 կէտերուն, Ռեփթըրրօյ յաջողեցաւ արձանագրել եղանակի իր 9րդ յաղթանակը: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Տոնիէլ Մարշալ, որ առաջին անգամ ըլլալով կը կրէր իր նոր կազմին շապիկը, նշանակեց 27 կէտ:

Տալասի մէջ, Մալքըրիքս 97-72 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ուաշինկթօն Ուիլքըրսթը, որ այսպիսով կրէց եղանակի իր 11րդ պարտութիւնը: Մայքըլ Ֆիլիքս (Տալաս) նշանակեց 16 կէտ եւ 12 ռիպաուստ, իսկ անոր խմբակից Անթուրն Ճէմիսըն՝ 21 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:

Թորոնթօ Ռեփթըրրօ - Ֆիլատելֆիա Սիքսըրկ	95-88
Միլուոքի Պաքս - Աթլանթա Հոքս	106-94
Նիւ Օրլինս - Օրլանտօ Մէճիք	100-91
Տալաս Մալքըրիքս - Ուաշինկթօն Ուիլքըրսթ	97-72
Տենսըր Եակեթըց - Քլիվլենտ Քաւալիքս	115-103

### ՓԵԼԻՑՈԼԻ ԶԱՆՈՂԵՑԱԻ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ ՄԸ ՀԱՍՏԱՏԵԼ

Ա. Էս. Ռոմայի բերդապահ Իվան Փելիցոլի անցեալ շաբաթավերջին ձախողեցաւ Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումն եր ու ն (Քալչիօ) նոր մրցանիշը սը հաստատելու համար իր պայքարը շարունակել, որովհետեւ 774 վայրկեանի վերջին անառիկ պահել է ետք, ի վերջոյ կոյ մը ստացաւ, հակառակ անոր որ մրցակից կազմը Լէչէ 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրէց անոր կազմէն:



Փելիցոլի

Այդ մրցանիշը կը պատկանի Ա. Սէ. Միլանի բերդապահ Սեպասթիանօ Ռուսիի, որ 929 վայրկեան կոյ չէ ստացած իր բերդէն ներս, Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:

Հակառակ այդ մէկին սակայն, 23 տարեկան Փելիցոլի ըսաւ, որ պիտի փորձէ մրցանիշը սը հաստատելու իր առաքելութիւնը շարունակել, որովհետեւ տակաւին կը մնայ երիտասարդ:

ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ

ՌԻԱՏԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒ ՇՈՒՐՋ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՌԱՔԵԼ ԿԸ ԽՍՏԱՆԱՆ

ՌԻԱՏ, 3 (ԱՅՓ)։ Մեկուսական Արաքիոյ իշխանութիւնները Ռիատի մէջ բնակարանային համալիրներու շուրջ ապահովութեան միջոցառումներուն թափ տուած են՝ ամերիկեան դեսպանատան այն պնդումներէն ետք, թէ արեւմուտքցիներու բնակարանային կեդրոնները կրնան նոր յարձակումներու թիրախ դառնալ:

Դեսպանատունը խօսած է յատկապէս մայրաքաղաքին արեւելքը գտնուող Սիտէր գիւղ բնակարանային համալիրին մասին, պնդելով, որ նորագոյն տեղեկութիւններուն համաձայն, անիկա «առաքելական տարրերու կողմէ գործող հսկողութեան տակ դրուած է»:

Չգուշացուել տեղի ունեցած է հակառակ սեղանական ճիգերուն՝ իսլամական կասկածելի արմատականներ ճնշելու: Այդ քայլերուն ծիրէն ներս Չորեքշաբթի օր այլ ձեռնարկութիւն մը տեղի ունեցած է:

Արեւմուտքցի դիւանագետ մը յայտնած է, թէ «նորագոյն պնդումները կատարուած է սեղանական ապահովութեան ուժերուն կողմէ առաքելիկներու մէկ թաքստոցին մէջ Սիտէր համալիրին յատկապէս յայտնաբերուածներէն ետք»:

Սերբիոյ գործող նախարարութեան մէկ պաշտօնատար Չորեքշաբթի օր յայտարարած է, թէ սեղանական ապահովութեան իշխանութիւնները Մուհալա համալիրին դէմ յարձակումին հեղինակներէն մէկը ձերբակալուած են, ինչպէս նաեւ գրաւուած են մեծ քանակութեամբ զէնք եւ պինդաբերք:

Նախարարութիւնը անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ մայրաքաղաքին հիւսիսը տեղի ունեցած բախումի մը ընթացքին ձեռնարկութեան մասնաձեւ «լայնածիր յարձակում մը», որ նման պիտի ըլլար Մուհալայի յարձակումին:

ԻՍՐԱՅԵԼ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլ շարունակեց գործողութիւնները պաղեստինեան շրջաններու մէջ, ձերբակալելու համար մեծ թիւով արմատական պինդակներ եւ անոնց պատասխանատուները: Բանակին մէկ բանբերը ըստ, որ իսլամական ժիհադի 17 հետեւորդներ ձերբակալուած են Այսրյորդանի ժենին քաղաքին մէջ եւ անոր շրջակայքը: Պաղեստինեան ապահովութեան աղբիւր մը հաղորդեց, որ իսրայէլեան ուժերը հրասայլերով եւ զրահայատ փոխադրակառքերով մտած են ժենին երէկ, արեւածագէն առաջ: Երկու օր առաջ, նման գործողութիւն մը տեղի ունեցած էր Ռամալլայի մէջ, ուր ձերբակալուած էր երեսուն հոգի:

Ժենինի ձերբակալութիւնները տեղի կ'ունենային այն պահուն, երբ պաղեստինեան արմատական շարժումները կը պատրաստուէին Գահիրէի հանդիպումին, որուն ընթացքին Եգիպտոս պիտի փորձէ համոզել Համասն ու Իսլամական ժիհադը յայտարարելու համար: Ընդհանուր Հրամանուր Հրամանատարութիւն Շարժումը սակայն կը մերժէ պինդադուլի բանակցութիւնները: Յիշեալ շարժումին անունով հրապարակուած յայտարարութիւն մը կը նշէր, թէ վճռուած են տեղի չտալ ու չպիշիլ պաղեստինեան ազգային սկզբունքներէն, որոնց կարեւորագոյնը կը նկատուի վերադարձի իրաւունքը հապարարտ պաղեստինցիներու:

Գահիրէի Ազատագրութեան Ժողովրդային Ճակատ-Ընդհանուր Հրամանատարութիւն Շարժումը սակայն կը մերժէ պինդադուլի բանակցութիւնները: Յիշեալ շարժումին անունով հրապարակուած յայտարարութիւն մը կը նշէր, թէ վճռուած են տեղի չտալ ու չպիշիլ պաղեստինեան ազգային սկզբունքներէն, որոնց կարեւորագոյնը կը նկատուի վերադարձի իրաւունքը հապարարտ պաղեստինցիներու:

ՍԵՐԲԻԱՆ ԻՐ ՇՐՋԱՊՏՈՅՏԻՆ ԸՆԹԱՅԸՆԸ ՓԱՌԸՆ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՄԱՐՈՔԻ ԹԱԳԱՌՈՒՆ ՅԵՏ



ՄԱՐՈՔԷԸ, 3 (ԱՅՓ)։ Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Չորեքշաբթի օր տեսակցութիւն մը ունեցած է Մարոքի Սոհամէտ թագաւորին հետ՝ Հիւսիսային Ափրիկէի իր շրջապտոյտին երկրորդ հանգրուանին ընթացքին: Երջապտոյտին նպատակն է պարկ տալ առաքելութեան դէմ պատերազմին եւ ժողովրդավարութիւնը քաջալերել:

Մարոք եւ Թունիս, ուր Փաուլը Երեքշաբթի օր սկսած էր իր եռօրեայ շրջապտոյտը, անցնող 2 տարիներուն իսլամական ծայրախելականներու յարձակումներուն թիրախ դարձած են: Իսկ Ալճերիա, որ նույնպէս շրջապտոյտին մաս կը կազմէ, 12 տարիէ ի վեր կը դիմագրաւէ քաղաքացիական պատերազմ մը՝ իսլամական արմատականներու եւ բանակին պորակցութիւնը վալիւղ վարչակարգին միջեւ:

Սոհամէտ թագաւորը իր ամերիկեան արտաքին գործոց նախարարութեան Թունիսի գծով կատարած քննադատութիւնները, Փաուլը թղթակիցներու ըսած է, թէ Թունիս պէտք է «քաղաքական բարեկարգումներու վրայ» կեդրոնանալ:

Ան ըսած է, թէ Մ. Նահանգներ եւ Թունիս «քաջալերել գործակցութիւն մը» ունին՝ առաքելութեան դէմ պայքարին եւ Միջին Արեւելքի տագնապին լուծումի մը որոնումին մէջ:

ԿԻՊՐՈՍԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՆ ՀԱՐՅԸ ԱՄԷՆ ՊԱՐԱԳԱՅԻ ԵՒ ԱՄԷՆ ԳՆՈՎ ՊԷՏՔ Է ԼՈՒԾՈՒԻ

Յունաստան երէկ յայտնած է, թէ Կիպրոսի բաժանումին հարցը պէտք է լուծուի, ինչ ալ ըլլան անոր հիւսիսային շրջանի մէջ Դեկտեմբեր 14ին կայանալիք ընտրութեանց արդիւնքները:

Յունաստանի վարչապետ Քոստաս Միմիքիս ըսած է, թէ այդ հարցին լուծումը պէտք է տեղի ունենայ «ՄԱԿի բանաձեւերու ծիրէն ներս»:

Կիպրոսի նախագահ Թասոս Փափաճոփոլոս անցեալ շաբաթ յայտնած է, թէ թուրք կիպրական շրջանին մէջ երեսփոխանական ընտրութիւններուն կայացումէն ետք, ՄԱԿի պիտի դիմէ, որ բանակցութիւնները վերսկսուին:

Թուրք կիպրական ընդդիմադրութիւնը կ'ուզէ աշխատանք տանիլ դէպի ՄԱԿի միջնորդութեամբ լուծում մը: Անիկա ամէն գնով նաեւ կ'ուզէ իշխանութեան ներսը հեռացնել այն կուսակցութիւնները, որոնք պօրավիճ կը կանգնեն թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշի կարծիքը կեցւածքին: Տենքթաշ կը մերժէ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի վերամիացման առնչուող ծրագիրը:

Տենքթաշ երէկ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ ըսած է, թէ օտար դէտերու արտօնութիւն պիտի տրուի հսկելու խորհրդարանական ընտրութեանց:

ԹԻՔԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիւլ Չորեքշաբթի օր ըսած է, թէ այդ ուժերուն միջոցով կայացուցեալ բանալի քանի մը կասկածելիներ արտասահմանի մէջ կը հետապնդուին, առանց սակայն մանրամասնութիւններ տալու:

Կիւլ ողջունած է անձնասպանական գործողութիւններէն ետք իրանի եւ Սուրիոյ հետ գործակցութիւնը, միաժամանակ քննադատելով Եւրոպական երկիրները, որոնք գորակցութիւն չեն ցուցաբերած թուրքերոյ:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Իր կարգին, ձորձ Ռոպրթսըն պատասխանելով լրագրողներու հարցումներուն նշեց, թէ ՕԹԱՆ խորհրդին չի դնէր իր գործընկերներուն միջեւ: Ասուիլիս ընթացքին Քոչարեան եւ Ռոպրթսըն անդրադարձան Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան ընդհանուր համակարգի ստեղծման հարցին: Հայաստանի նախագահը այս առումով նկատել տուաւ, որ այդ գաղափարը հնչած է ԵԱՀԿի Պոլսոյ վեհաժողովին եւ ապա տարբեր հանդիպումներու ընթացքին, այսուհանդերձ չէ իրականացած: Տագնապներու առկայութիւնը կը դժուարացնէ այդպիսի համակարգի մը ստեղծումը:

Նախագահ Քոչարեան, որուն գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմէն Հայաստանի արտաքին գործոց, պաշտպանութեան, առեւտուրի եւ տնտեսութեան նախարարները եւ այլ պաշտօնատարներ, երէկ նաեւ հանդիպում ունեցաւ Եւրոպական Յանձնաժողովի գիտական հետազոտութիւններու յանձնակատար Ֆիլիպ Պիլկանի, առեւտուրի յանձնակատար Փաքալ Լամիի, Եւրոպական Միութեան ընդարձակման յանձնակատար Կոնսթըր Վէրիէօլընի հետ:

Կը նախատեսուի, որ նախագահ Քոչարեան Պրիսթիի մէջ տեսակցի նաեւ Պելճիքայի թագաւոր Ալբերտ Բ-ի, Եւրոպական Խորհրդարանի նախագահ Փէթ Քոքսի, Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոման Փրոտիի եւ Եւրոպական Միութեան ընդհանուր քարտուղար Խալիէ Սոլանայի հետ:

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, որ մաս կը կազմէ նախագահ Քոչարեանի գլխաւորած պատուիրակութեան, Պելճիքայի Մոնս քաղաքին մէջ տեսակցեցաւ Եւրոպայի մէջ Միացեալ Նահանգներու եւ ՕԹԱՆի միացեալ ուժերու հրամանատար ձէյնս ձոնպի հետ:

Advertisement for G. AYANIAN & SONS featuring various lighting fixtures and the slogan 'Vivez en lumière!'. The ad includes contact information for Dora (01)255222/3/4/5/6, Gemmayzé (01)447000-445396, and (03)627728/9. Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dim.net.lb; www.ayanian.com

ՌԻԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՅԱՏՈՒԿ ՌԻՃԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ ԻՐԱՔԻ ՄԷՉ՝ ԸՄՔՈՍ ՏԱՐՐԵՐՈՒ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Ուաշինկթըն կը ծրագրէ մասնաւոր ուժեր հաստատել՝ ստանձնելու համար իրաքցի ըմբոստներու հետապնդումը, յայտնեցին կարգ մը աղբիւրներ: Մինչ այդ, ամերիկեան ուժերը մեծ գործողութեան մը կը ձեռնարկէին՝ ձերբակալելու համար Սատամ Հուսէյնի վարչամեքենային բանալի դէմքերը:

«Ուաշինկթըն Փոսթ» հաղորդեց, որ Միացեալ Նահանգներ կը պատրաստեն նոր ուժ մը, որ կազմուած պիտի ըլլայ իրաքի քաղաքական գլխաւոր հինգ կուսակցութիւններու պինդակներէն, որոնց պարտականութիւնը պիտի ըլլայ «որսալ» նախկին վարչակարգին պատասխանատուներն ու ըմբոստ ուժերը: Ըստ օրաթերթին, իրաքեան ուժերուն թիւը պիտի հասնի 850ի եւ թէ անոնք պիտի գործակցին ամերիկեան մասնաւոր ուժերու պիտուորներու հետ, որոնք ուղղակի ենթակայ են ամերիկեան հրամանատարութեան:

Իրաքեան ուժերու կազմութեան որոշումը ցոյց կու տայ, թէ ներկայիս տիրող իրավիճակը եւ ապահովութիւնը բարար չեն: Իրաքի ներքին ապահովութիւնը վստահուած է ոստիկաններու եւ քաղաքային պաշտպանութեան ուժերու:

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներ դիտել տուին, որ մասնաւոր ուժերու կազմութեան որոշումը տակաւին չէ վերջնականացած: Իշխող խորհուրդի անդամներ սակայն անցնող շաբաթավերջին յայտնեցին, որ ծրագիրը կազմուած ու որդեգրուած է:

Ամերիկեան ուժերը, որոնք թափ տուած են փախուսականները հալածելու քայլերուն, Երեքշաբթի օր յաջողած էին ձերբակալել Սատամի փոխանորդը նկատուող Իպպաթ Իպրահիմ Տուրիի անձնական քարտուղարը՝ Սատամ Սոհամէտ Տուրին: Ըստ ամերիկեան աղբիւրներու, Տուրիի մօտ գտնուած է 40 հազար տոլար, որ ենթադրաբար պիտի օգտագործուէր որպէս կից ուժերուն դէմ յարձակումներ ֆինանսատրելու համար: Տուրիի կողքին ձերբակալուած են նաեւ մօտադրապէս հարիւր իրաքցիներ: Վիրատուուած են նաեւ վեց քաղաքայիններ:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը քննադատեց իրատուական ցանցերը, որոնք իրաքի լուրերը հաղորդելով կը յայտնեն, թէ քառասուն եւ անիշխանական վիճակ մը կը տրիէ արաբական երկիրին մէջ: Պաշտօնատարը շեշտեց, որ իրատուական գործակալութիւնները պարտաւոր են նաեւ խօսիլ արձանագրուած նուաճումներուն եւ իրագործումներուն մասին:

ՊՐԵՍԸՐ-ԻՃԵՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ ԸՆԴԴԻՊՈՒՄ

Ամերիկացիներուն կողմէ նշանակուած փոխանցման հանգրուանի իշխանութիւնը երէկ հանդիպում ունեցաւ ամերիկացի քաղաքային ղեկավար Փոլ Պրեմըրի հետ: Իշխող խորհուրդը մեծամասնութեամբ ներկայ էր հանդիպումին, որ քննարկեց իշխանութեան արագ փոխանցման եւ ընտրութիւնները կայացնելու հարցերը:

Իշխող խորհուրդը տարակարծիք է իշխանութիւնը փոխանցելու գործընթացին մասին: Ոմանք կը բաժնեն շիի կոսմոսպետ յայտնուած Սիբաւնիի այն տեսակէտը, թէ անմիջապէս ընտրութիւններ պէտք է կայացուին, մինչ որ ընտրելու համաձայն են ամերիկեան առաջարկին, ըստ որուն ընտրութիւնները պէտք է կայացնել 2005ին: Անոնք կ'առաջարկեն կատարելութիւն մը «ընտրել» տեղական խորհուրդներու կողմէ: Յստակ չէ, թէ ինչ ելքակազմութեան պիտի յանգնի իշխող խորհուրդն ու Պրեմըրը, որոնք հաւանաբար այս գծով մէկէ աւելի հանդիպումներ պիտի ունենան:

«ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ» ...

Շարունակուած Ա. Էջէն

Կացնելու վայրերը, ուր կարելի է կիրարկել այլընտրանքային աշխատանքային ծառայութիւն եւ ստեղծելու համապատասխան վերահսկող մարմիններ:

ՄԵՐՈՒՄԵՑԱՒ 2001-2003 ՍԵՓԱԿԱՆԱՆՆՈՐԸՍԱՆ ՍԱՍԻ ԸԱՅՈՒՅՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Ազգային Ժողովը երէկուան իր նիստին ընթացքին մերժեց 2001էն 2003 ծածանական իրադրութեան սեփականաշնորհման մասին կառավարութեան հաշուետուութիւնը: Սերկայացուած հաշուետուութեան ի նպաստ քուէարկեցին 50 պատգամաւոր, դէմ՝ 19 պատգամաւոր, իսկ ձեռնպահ 13 պատգամաւոր: Դէմ քուէարկողներու շարքին էին Ազգային Ժողովի Հ. Յ. Է. «Օրինակ Երկիր» խմբակցութիւններու պատգամաւորները:

Սեփականաշնորհման մասին քննարկումներուն ընթացքին պատգամաւորները դժգոհուիւն յայտնած էին սեփականաշնորհումի ձեռնարկը: Կառուցուելուն մեծ մասը սեփականաշնորհումը էր ուղղակի վաճառքի միջոցով, առանց աճուրդի: Պատգամաւորները քննադատեցին նաեւ վաճառքի ցած գինները:

Յատկապէս Հ. Յ. Է. խմբակցութեան քարտուղար ընկ. Հրայր Կարապետեան խմբակցութեան անունով իր ելոյթին մէջ ներկայացուց շարք մը խօսուի թիւեր՝ չափազանց ցած գիներով հաստատութիւններու վաճառքին շուրջ:

Այսուհանդերձ, Ազգային Ժողովի նիստին երէկուան քուէարկութիւնը չի փոխէր իրավիճակը, որովհետեւ, գործող օրէնքին համաձայն, հաշուետուութեան մերժումը որեւէ հետեանք չի նախատեսուի: